ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեշտ ընթերցվող տարբերակ

UNITED NATIONS enable

United Nations

A Time for Renewal

Այս կոնվենցիայի լրիվ անունն է

Միավորված ազգերի կազմակերպության

կոնվենցիա

հաշմանդամություն ունեցող անձանց

իրավունքների մասին

Երևան-2011

1. Այս կոնվենցիան

Այս կոնվենցիան ընդունած պետություններում հաշմանդամություն ունեցող անձինք պետք է բոլորի նման ունենան նույն իրավունքները:

2. Սահմանումները

● Հարաբերություն, շփում ասելով հասկանում ենք այն միջոցները, որոնք օգնում են հաշմանդամություն ունեցող անձանց հաղորդակցվել և հասկանալ տեղեկատվությունը, օրինակ՝ համակարգիչ, հեշտ ընթերցվող տարբերակ կամ Բրայլի համակարգ:

● Խտրականություն նշանակում է հաշմանդամության պատճառով անարդարացի վերաբերմունքի ենթարկվել:

● Լեզու ասելով հասկանում ենք խոսակցական լեզուն, որով մարդիկ խոսում են միմյանց հետ, ինչպես նաև շարժումների լեզուն:

3. Ընդհանուր սկզբունքները

- Մարդիկ ազատ են իրենց ընտրությունը կատարելու:

- Ոչ ոք չպետք է խտրականության ենթարկվի:

- Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն հասարակական կյանքին մասնակցելու հավասար իրավունքներ, ինչպես մյուսները:

- Հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

- Յուրաքանչյուրն ունի հավասար հնարավորություններ:

- Յուրաքանչյուրը ունի որևէ վայր մուտք գործելու հավասար հնարավորություններ:

- Տղամարդիկ և կանայք հավասար են:

- Հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների նկատմամբ:

4. Պետությունների պարտավորությունները

- Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք հավասարապես պաշտպանված լինեն:

Այդ նպատակով պետությունները պարտավորվում են

- Մշակել նոր կանոններ և կանոնակարգեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման համար, ինչպես նաև կատարել օրենսդրական փոփոխություններ հին գործող օրենքներում:

- Երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները հավասարապես ամրագրված են օրենսդրության մեջ:

- Հաշմանդամության հետ կապված հարցերը ներառել երկրի ռազմավարությունում:

- Չկատարել այս կոնվենցիային հակասող գործողություններ:

- Ապահովել, որ պետական իշխանությունները գործեն այս կոնվենցիային համաձայն:

- Արգելել խտրական վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

- Երաշխավորել, որ ամեն ինչ կառուցված է այնպես, որ յուրաքանչյուր մարդ կարողանա օգտվել:

- Օգտագործել նոր տեխնոլոգիաներ՝ օգնելու հաշմանդամություն ունեցող անձանց:

- Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել նրանց համար օգտակար, մատչելի տեղեկատվություն:

- Վերապատրաստել մասնագետներին այս կոնվենցիայով սահմանված իրավունքների մասին:

- Երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող անձինք խտրականության չեն ենթարկվում:

- Պետություններն օրենսդրություն և ռազմավարություն մշակելիս և իրականացնելիս ներգրավեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց:

5. Հավասարություն

- Պետություններն ընդունում են, որ բոլորը հավասար են օրենքի առաջ և արգելվում է որևէ խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

6. Հաշմանդամություն ունեցող կանայք հավասարապես պաշտպանված են

- Պետությունները երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները տարբեր եղանակներով պաշտպանված են անարդարություններից:

- Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկներն ապրեն ազատ, լիարժեք և հավասար հնարավորություններով կյանքով:

7. Հաշմանդամություն ունեցող երեխաները հավասարապես պաշտպանված են

- Պետություններն ընդունում են, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ մյուսները և հավասարապես պաշտպանված են:

- Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող երեխաները մասնակցեն իրենց վերաբերող հարցերի մասին կարծիք արտահայտելուն: Հաշմանդամություն ունեցող երեխաները կարիք ունեն առանձնահատուկ աջակցության:

8. Հաշմանդամության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում մարդկանց

- Պետություններն օգնում են մարդկանց հասկանալու, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն հավասար իրավունքներ և ցույց են տալիս նրանց ունակությունները, հմտությունները:

Այս նպատակով՝

- Կազմակերպելով քարոզարշավներ՝ փոխելու մարդկանց մտածելակերպը հաշմանդամություն ունեցող անձանց մասին:

- Ցույց տալով, թե ինչ հիանալի աշխատող կարող են լինել հաշմանդամություն ունեցող անձինք:

- Վաղ հասակից բոլոր երեխաների մեջ հարգանք սերմանելով հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների նկատմամբ:

- Լրատվամիջոցներով պատշաճ կերպով ներկայացնելով հաշմանդամություն ունեցող անձանց:

- Օժանդակելով հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

9. Մատչելիությունը

Պետություններն ապահովում են հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ֆիզիկական միջավայր:

- Հանրային վայրերը, ինչպես հիվանդանոցները, դպրոցները, փոխադրամիջոցները, պետք է մատչելի լինեն:

- Այդ շինություններում կիրառեն հեշտ ընթերցվող և հասկանալի նշաններ ու Բրայլի համակարգ:

- Տրամադրեն ուղեկցողներ և նշանների լեզվի մասնագետ թարգմանիչներ հասարակական վայրերում:

- Լինեն ուղեցույցներ, թե ինչպես ավելի հեշտ մուտք գործել հանրային վայրեր:

● Մշակեն տեղեկատվության մատչելիության վերաբերյալ վերապատրաստում:

● Ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց համար նոր տեխնոլոգիաներից օգտվելու մատչելիություն:

● Ապահովեն տեղեկատվական ու հաղորդակցական նոր տեխնոլոգիաների մատչելիությունը:

● Ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ մատչելի տեղեկատվություն:

10. Կյանքի իրավունք

- Յուրաքանչյուրը, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձինք, ունեն կյանքի իրավունք:

- Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք արդյունավետ օգտվեն կյանքի իրավունքից:

11. Արտակարգ իրավիճակներ

- Պետություններն ապահովում են վտանգավոր իրավիճակներում կամ բնական աղետների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունը:

12. Օրենքի առաջ հավասարությունը

- Հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

- Հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների նման ունեն նույն իրավունքները կարևոր հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Որոշումներ կայացնելիս անհրաժեշտության դեպքում հաշմանդամություն ունեցող անձինք ստանում են համապատասխան աջակցություն:

- Եթե հաշմանդամություն ունեցող անձը մյուսների հետ խոսելու համար կարիք ունի ևս մեկ այլ մարդու, պետք է օրենք, կանոններ լինեն՝ վստահ լինելու համար, որ դա արվում է պատշաճ ձևով:

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն հավասար իրավունքներ

- Ունենալու անշարժ գույքի սեփականություն:

- Վերահսկելու իրենց սեփական ֆինանսական միջոցները:

- Մյուսների նման պարտք վերցնելու:

- Գումարը կամ բնակարանն իրենցից չխլելու:

13. Արդարադատություն

● Ինչպես բոլորը, հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես ունեն դատարան գնալու, այլ մարդու դատարան տանելու, ինչպես նաև դատարանում գործի քննությանը մասնակցելու իրավունք:

● Հաշմանդամություն ունեցող անձինք աջակցություն են ստանում՝ վստահ լինելու, որ իրենք ունեն այդ իրավունքները:

● Պետությունները հատուկ վերապատրաստում են իրականացնում դատարանների, ոստիկանության և կալանավայրերի աշխատակազմերի համար:

14. Ազատ և պաշտպանված լինելը

- Հաշմանդամություն ունեցող անձինք ազատ և պաշտպանված են մյուսների պես:

- Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրենց հաշմանդամության պատճառով չեն կալանավորվում, եթե չկա այլ պատճառ օրենքին համաձայն:

- Հաշմանդամություն ունեցող անձինք բոլորի նման ունեն նույն իրավունքները՝ միջազգային օրենքներին համապատասխան: Կոնվենցիայում այդ իրավունքները նշված չեն, սակայն հաշվի է առնված դրանց գոյությունը:

- Ստանան մատչելի տեղեկատվություն իրենց իրավունքների մասին:

- Ապահովել, որ դատարանում ստանան աջակցություն՝ արդար քննություն իրականացնելու համար:

- Իրենց գործերի քննությունը կազմակերպվի այն հաճախականությամբ, ինչպես մյուսներինը:

15. Բռնությունների և խոշտանգումների չենթարկվելը

- Հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է ենթարկվեն բռնությունների կամ խոշտանգումների:

- Հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է ենթարկվեն փորձերի, հատկապես բժշկական, առանց իրենց համաձայնության:

- Պետությունները ձեռնարկում են ամեն ինչ՝ երաշխավորելու համար նման դեպքերի արգելումը:

16. Պաշտպանվածություն բռնությունից և շահագործումից

- Պետությունները մշտապես մշակում են օրենքներ և կանոններ՝ պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց տանը և դրսում բռնություններից, դաժան վերաբերմունքից և շահագործումից:

- Պետությունները նաև կանխում են չարաշահումները՝ ապահովելով համապատասխան աջակցություն, տրամադրելով տեղեկատվության և ուսուցանելով, թե ինչպես խուսափեն չարաշահումներից և հայտնեն դրանց մասին:

- Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող ծառայությունները արդյունավետ կերպով վերահսկվեն՝ երաշխավորելու համար, որ չարաշահումներ չեն լինի:

- Պետությունները միջոցներ են ձեռնարկում, որ շահագործման ենթարկված անձանց տրամադրվի անհրաժեշտ օգնություն և աջակցություն, նրանց պահեն ապահով և օգնեն վերականգնվելու:

- Պետություններն արդյունավետ կերպով ապահովում են հայտնաբերելու շահագործման դեպքերը և այդ մարդկանց նկատմամբ դատական գործ հարուցելու:

- Հատկապես կանայք և երեխաներն ունեն առաձնահատուկ աջակցության կարիք:

17. Հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանված լինելը

- Հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների նման պաշտպանված են նույն իրավունքներով:

18. Տեղաշարժվելը

Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն

- Ընտրելու իրենց բնակության վայրը, ինչպես մյուսները:

- Լինել երկրի քաղաքացի և հաշմանդամության պատճառով չզրկվել դրանից:

Ունենալ փաստաթղթեր, ինչպես, օրինակ՝ անձնագիր, ինչպես բոլոր մարդիկ:

- Մեկնել ինչպես ցանկացած, այնպես էլ իր երկրից:

- Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն անուն ունենալու, քաղաքացիություն ստանալու իրավունք, ինչպես նաև հնարավորության դեպքում իրենց ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի տակ գտնվելու իրավունք:

19. Անկախ ապրել և լինել հասարակության մի մասը

- Պետությունները երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն ընտրելու ազատություն և լինելու իրենց հասարակության մի մասը:

Հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ընտրել՝

- Իրենց բնակության վայրը, ինչպես յուրաքանչյուրը:

- Ում հետ ապրել, ինչպես յուրաքանչյուրը:

- Եվ չապրել հանրակացարանի կարգի հատուկ վայրում, եթե չեն ուզում:

- Օգտվելու աջակցության տարբեր ծառայություններից, ներառյալ անձնական աջակցությունից:

20. Տեղաշարժվելը

- Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորինս ինքնուրույն կարողանան տեղաշարժվել:

- **Պետությունները պետք է՝**

Նպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությանը:

- Օգնեն հաշմանդամություն ունեցող անձանց գտնելու շարժունակություն ապահովող որակյալ պարագաներ, սարքավորումներ:

- Այդ պարագաները տրամադրել մատչելի գներով:

- Կազմակերպել դասընթացներ տեղաշարժվելու հմտությունների մասին:

- Սարքավորումներ արտադրող ձեռնարկություններից պահանջել, որ դրանք համապատասխանեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

21. Խոսքի ազատություն և տեղեկատվության մատչելիություն

● Պետություններն ապահովում են, որ ինչպես յուրաքանչյուրը, հաշմանդամություն ունեցող անձինք ունենան տեղեկատվություն ստանալու և տրամադրելու իրավունք, ինչպես նաև ասելու այն, ինչ ցանկանում են:

Այդ նպատակով՝

● Տեղեկատվության տրամադրում մատչելի եղանակով, օրինակ՝ հեշտ ընթերցվող:

● Տեղեկատվության տրամադրում ժեստերի լեզվով, Բրայլի համակարգով և այլ միջոցներով:

● Պահանջել ծառայություններ մատուցող ձեռնարկություններից տրամադրել մատչելի տեղեկատվություն:

● Լրատվամիջոցներով և ինտերնետի միջոցով մատչելի տեղեկատվության տրամադրում:

● Աջակցության տրամադրում՝ օգտագործելու ժեստերի լեզուն:

22. Գաղտնիությունը

- Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն անձնական կյանքի, և ոչ ոք չպետք է միջամտի կամ խանգարի դրան:



- Պետությունները պաշտպանում են, որ ինչպես յուրաքանչյուրը, հաշմանդամություն ունեցող անձանց մասին անձնական տեղեկատվությունը պահվում է գաղտնի:

23. Տան և ընտանիքի նկատմամբ հարգանք

Պետությունները երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն ամուսնանալու, ընտանիք կազմելու և անձնական հարաբերությունների հավասար իրավունքներ:

Պետություններն ապահովում են, որ

- Հաշմանդամություն ունեցող անձինք ապագա ամուսինների համաձայնությամբ ունենան ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք:

- Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունենան որոշելու, թե քանի երեխա ունենան և երբ, և իրենց կամքին հակառակ չզրկվեն երեխա ունենալու հնարավորությունից:

- Հաշմանդամություն ունեցող անձինք ունեան ընտանիքի անդամների թվի, ինչպես նաև այդ հարցի շուրջ որոշում ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու իրավունք:

- Պետություններն աջակցում են հաշմանդամություն ունեցող անձանց դաստիարակելու իրենց երեխաներին:

- Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն իրենց ծնողներից չբաժանվելու իրավունք: Պետություններն աջակցում են հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին:

Երեխաների իրավունքներն առաջնային են

- Պետությունները երաշխավորում են, որ երեխաները չբաժանվեն իրենց ծնողներից, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բաժանումը բխում է երեխայի շահերից:

24. Կրթությունը

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն կրթության իրավունք:

Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախեն հանրակրթական դպրոց:

- Կրթությունը շարունակվում է ողջ կյանքի ընթացքում:

- Հաշմանդամություն ունեցող անձինք չեն մեկուսացվում ընդհանուր կրթական համակարգից հաշմանդամության պատճառով:

- Հաշմանդամություն ունեցող անձինք չեն զրկվում անվճար և պարտադիր կրթություն ստանալու իրավունքից:

- Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հնարավորինս բավարարվում են:

- Եթե հիմնական դպրոցում նրանց կարիքները չեն բավարարվում, ապա կարելի է այլ կրթություն կազմակերպել, բայց այնպես, որ նրանք չմեկուսացվեն հասարակությունից:

- Հաշմանդամություն ունեցող անձանց պատշաճ կերպով աջակցելու նպատակով ուսուցիչների և անձնակազմի վերապատրաստում:

- Նպաստել Բրայլի համակարգի ուսուցմանը:

- Նպաստել ժեստերի լեզվի ուսուցմանը՝ որպես խուլ մարդկանց հաղորդակցության միջոց:

- Ապահովել խուլ և կույր երեխաների ուսուցումը՝ այդ անձի համար ամենահարմար ձևով:

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ներգրավելու համապատասխան որակավորմամբ ուսուցիչների:

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթությունը մատչելի լինի ամբողջ կյանքի ընթացքում:

25. Առողջություն

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն առողջ լինելու իրավունք, ինչպես նաև առողջապահական հիմնարկներ մուտք գործելու հավասար հնարավորություն:

Այդ նպատակով պետությունները՝

- Ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների պես մուտք գործելու հնարավորություն ունեն բժշկական կենտրոններ:
- Ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցեն հաշմանդամության հատուկ կարիքներին անհրաժեշտ բժշկական ծառայություններ:

- Ապահովում են, որ առողջապահական ծառայությունները մատուցեն մարդկանց բնակության վայրին որքան հնարավոր է մոտ:

- Երաշխավորում են, որ բուժաշխատողները հաշմանդամություն ունեցող անձանց մատուցեն նույն որակի ծառայություններ, ինչ մյուսներին:

- Արգելում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը կյանքի և բժշկական ապահովագրության ոլորտում:

- Արգելում են հաշմանդամության պատճառով հրաժարվել ցույց տալ բժշկական աջակցություն:

26. Վերականգնմանը նպաստող ծառայություններ

Պետությունները հնարավորինս ապահովում են հաշմանդամություն ունեցող անձանց անկախ և առողջ կյանքը և նպաստում նրանց աշխատանքին, կրթությանը, առողջությանը և սոցիալական ծառայություններից օգտվելուն:

Պետությունները պետք է որքան հնարավոր է շատ տեղյակ լինեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիերայի և կարողությունների մասին, որպեսզի նրանց աջակցեն՝ տրամադրելով անհրաժեշտ ծառայություն:

- Այս ծառայությունները պետք է որքան հնարավոր է մոտ լինեն հաշմանդամություն ունեցող անձանց բնակության վայրին:

- Նպաստել մասնագետների և անձնակազմի համար կազմակերպվող դասընթացներին:

- Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց բուժմանն ու վերականգնմանը նպաստող օժանդակ պարագաներ ու տեխնոլոգիաներ ձեռք բերելուն:

27. Աշխատանք

Հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես ունենան աշխատանք:

Պետությունները ջանքեր են գործադրում հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանք գտնելու համար:

Այդ նպատակով՝

- Մշակել օրենքներ՝ երաշխավորելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք հավասարապես պաշտպանված են աշխատավայրում:

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան աշխատանքային հավասար իրավունքներ, կանոններ և վարձատրություն:

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունենան միանալու միությունների՝ համաձայն երկրի օրենսդրության:

- Երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են մասնակցել աշխատանքային վերապատրաստումների:

- Օգնել հաշմանդամություն ունեցող անձանց գտնել և ունենալ աշխատանք, ինչպես նաև անցնել ավելի լավ աշխատանքի:

- Օգնել հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծելու սեփական բիզնեսը:

- Հաշմանդամություն ունեցող անձանց տալով կառավարությունում, դեսպանություններում և հիվանդանոցներում աշխատանք:

- Օգնել կազմակերպություններին հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորելու համար:

● Երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան հարմարավետ աշխատանքային պայմաններ:

● Երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու հնարավորություն կտրվի:

● Օգնել հաշմանդամություն ունեցող անձանց վերադառնալու աշխատանքի:

● Պետությունները երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք հարկադրված չկատարեն չվարձատրվող աշխատանք:

28. Ապրելու բավարար պայմանները

Երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան լավ ապրելու բավարար պայմաններ: Դա ներառում է սնունդը, հագուստը, բնակարանը և մաքուր ջուրը:

Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի բարելավմանը:



- Հաշմանդամություն ունեցող անձինք ստանան պետական աջակցություն իրենց հաշմանդամության ծախսերը հոգալու համար:

- Հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես կանանց, աղջիկներին և տարեցներին մատչելի լինեն սոցիալական պաշտպանության ծրագրերը:

- Երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող աղքատ անձինք պետությունից ստանան աջակցություն՝ հաշմանդամության ծախսերը հոգալու նպատակով:

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ձեռք բերել բնակարան:

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք հավասարապես ունեն ծերության կենսաթոշակ ստանալու հնարավորություն:

29. Մասնակցություն քաղաքական և հասարակական կյանքին

Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների պես ունենան քաղաքական կյանքին լիարժեք մասնակցելու իրավունք:

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն քվեարկելու իրավունք՝

- Ապահովել, որ քվեարկության վայրերը և միջոցները մատչելի են և հասկանալի:
- Պաշտպանել գաղտնի քվեարկության իրավունքը:

- Անհրաժեշտության դեպքում օգնել անձանց քվեարկել իրենց նախընտրած եղանակով:

- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների գործունեությանը:

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան միանալ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին: Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն մասնակցելու ընտրություններին՝ առաջադրելով իրենց թեկնածությունը:

30. Սպորտ և ժամանց

Հաշմանդամություն ունեցող անձինք բոլորի նման իրավունք ունեն մասնակցելու սպորտային և ժամանցային միջոցառումների:

Պետությունները երաշխավորում են, որ

- Իրերը, օրինակ՝ գրքերը մատչելի են:

- Հեռուստահաղորդումները, կինոթատրոնները և թատրոնները մատչելի են:

- Հաշմանդամություն ունեցող անձինք կարող են մուտք գործել այնպիսի վայրեր, ինչպիսին թանգարաններն են:

- Հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունեն արվեստագետ դառնալու, եթե ցանկանում են:

- Օրենքներն ու կանոնադրությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար ավելի չեն դժվարացնի այդ իրականացնելը:

- Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցելու մարզական միջոցառումների:

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կազմակերպեն հաշմանդամությանը հատուկ սպորտային և ժամանցային միջոցառումներ:



- Սպորտի համար նախատեսված վայրերը մատչելի են:

- Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն խաղալու, սպորտային և ժամանցային միջոցառումներին մասնակցելու հավասար հնարավորություններ:

31. Տեղեկատվությունը

Պետությունները հավաքում են անհրաժեշտ տեղեկատվություն՝ նպաստելու այս կոնվենցիայի իրականացմանը:

Տվյալները պահվում են գաղտնի և առանձին:

32. Պետությունների համագործակցությունը

Պետությունները համագործակցում են համապատասխան կազմակերպությունների, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ:
Այդ նպատակով՝

- Ապահովում են, որ համագործակցության մեջ ներգրավված են հաշմանդամություն ունեցող անձինք:

- Նպաստում են տեղեկատվության, փորձի, ուսուցման ծրագրերի, լավագույն գործելակերպի փոխանակմանը:

- Նպաստում են համագործակցությանը և փոխանակում մատչելի և օժանդակող տեխնոլոգիաներ:

33. Այս կոնվենցիայի դրույթների իրականացումը

Պետությունը պետք է՝

- Կառավարությունում ունենա համապատասխան մարմին՝ գործադրելու այս կոնվենցիայի իրականացումը:

- Ունենա կոնվենցիայի վերաբերյալ միջոցառումների իրականացման ծրագիր:

- Ներգրավի հաշմանդամություն ունեցող անձանց՝ վերահսկելու կոնվենցիայի ճիշտ և արդյունավետ իրականացմանը:

34. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն

- Կոմիտեն ստեղծվում է պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները: Սկզբում (ստեղծման ժամանակ) այնտեղ ընդգրկված պետք է լինի 12 մասնագետ, այնուհետև նրանց թիվը հասնում է 18-ի:

- Կոմիտեի անդամներն ընտրվում են 4 տարի ժամկետով:

Կոմիտեի լրացուցիչ 6 անդամները անդամ են լինում միայն 2 տարի ժամկետով:

- Անդամներն ընտրվում են կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից: Հաշվի է առնվում թեկնածուի երկրի աշխարհագրական դիրքը և զարգացման աստիճանը: Հատկապես կարևոր է հաշմանդամություն ունեցող մասնագետների մասնակցությունը:

- Ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկությամբ: Առավելագույն ձայներ ստացած մարդիկ ընտրվում են կոմիտեի անդամ:

- Ընտրություններն անցկացվում են ոչ ուշ, քան կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Պետությունները 2 ամսում պետք է գլխավոր քարտուղարին ուղարկեն իրենց առաջարկությունները կոմիտեի թեկնածուների վերաբերյալ:

- Կոմիտեն ինքն է սահմանում իր աշխատանքային կանոնները:

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը կոմիտեի աշխատանքների արդյունավետ իրականացման համար տրամադրում է համապատասխան անձնակազմ ու նյութական միջոցներ:

35. Մասնակից պետությունների հաշվետվությունները

Յուրաքանչյուր պետություն այս կոնվենցիան ստորագրելու օրվանից հետո՝ 2 տարվա ընթացքում, հաշվետվություն է ներկայացնում կոմիտեին այս կոնվենցիայի դրույթների իրականացման աշխատանքների մասին:

- Դրանից հետո յուրաքանչյուր երկիր հաշվետվություն է ներկայացնում առնվազն 4 տարին մեկ անգամ, ինչպես նաև լրացուցիչ հաշվետվություններ, եթե կոմիտեն պահանջում է:

- Կոմիտեն որոշում է հաշվետվությունների բովանդակության վերաբերյալ ուղեցույցները:

- Հաշվետվություններում կարող են նշվել այն դժվարությունները, որոնք ազդում են կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման վրա:

36. Ի՞նչ են արվում հաշվետվությունները

Կոմիտեն ուսումնասիրում է հաշվետվությունները և ներկայացնում առաջարկություններ դրանց վերաբերյալ: Այն կարող է պահանջել նաև լրացուցիչ տեղեկատվություն:

- Եթե հաշվետվություն ներկայացնելն ուշանում է, կոմիտեն կարող է նախազգուշացնել այդ երկրին, որից հետո 3 ամսվա ընթացքում վերջինիս տարածքում այս կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ուսումնասիրություն կանցկացնի:

- Բոլոր պետությունները կարող են ծանոթանալ բոլոր հաշվետվություններին:

- Յուրաքանչյուր պետություն իր հաշվետվությունները մատչելի է դարձնում իրենց երկրի հանրության համար:

- Անհրաժեշտության դեպքում կոմիտեն հաշվետվություններն ուղարկում է ՄԱԿ-ի տարբեր մարմիններ և կազմակերպություններ՝ կարծիքի կամ օգնության խնդրանքով:

37. Կոմիտեի և մասնակից պետությունների համատեղ աշխատանք

Յուրաքանչյուր պետություն կոմիտեի հետ աշխատում է համատեղ և աջակցում կոմիտեի անդամներին անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Կոմիտեն մասնակից պետությունների հետ մտածում է՝ ինչպե՞ս արդյունավետ իրականացնել այս կոնվենցիայի դրույթները:

38. Կոմիտեի հարաբերություններն այլ կազմակերպությունների հետ

Շատ կարևոր է, որ պետություններն ու կազմակերպությունները աշխատեն միասին՝ այս կոնվենցիայի դրույթների իրականացման համար:

- Տարբեր կառույցներ և կազմակերպություններ ներգրավված են կոմիտեի կողմից՝ խորհրդատվություն և տեղեկատվություն տրամադրելու իրենց գործունեության ոլորտների վերաբերյալ:

- Կոմիտեն կարող է առաջարկել մարդկանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին ներկայացնել հաշվետվություններ իրենց աշխատանքի համապատասխանությանը այս կոնվենցիային:

39. Կոմիտեի հաշվետվությունը

Յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ կոմիտեն հաշվետվություն է ներկայացնում Գլխավոր ասամբլեային ու Տնտեսական և սոցիալական խորհրդին՝ տարբեր երկրներում իրականացվող իր գործունեության մասին:

40. Մասնակից պետությունների հանդիպումները

Մասնակից պետությունները պարբերաբար հանդիպում են՝ քննարկելու այս կոնվենցիայի իրականացմանն առնչվող հարցեր:

Առաջին հանդիպումը տեղի է ունենում կոնվենցիայի ընդունման օրվանից ոչ ուշ, քան 6 ամիս հետո: Հետագա հանդիպումները հրավիրում է գլխավոր քարտուղարը:

41. Բոլոր հաշվետվությունների և տեղեկատվության պահպանումը

Բոլոր հաշվետվություններն ու տեղեկատվությունը հանձնվում են Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

42. Կոնվենցիայի ստորագրումը

Պետությունները կարող են ստորագրել այս կոնվենցիան 2007 թ. մարտի 30-ից Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության նստավայրում:

43. Համաձայնությունն ու հաստատումը

Կոնվենցիան գործում է այն երկրներում, որոնք ստորագրել են այն:

Այն պետությունները, որոնք դեռ չեն ստորագրել, ևս կարող են միանալ:

44. Միավորված երկրներ

Որոշ երկրներ միավորվում են կազմակերպություններում, ինչպես՝ Եվրոպայի միությունը:

Այս կազմակերպությունները նույնպես կարող են միանալ կոնվենցիային և երկրների հանդիպման ժամանակ ևս ասելիք ունենան:

45. Ե՞րբ է կոնվենցիան ուժի մեջ մտնում

Այս կոնվենցիան ուժի մեջ է մտնում 20 երկրների կողմից հավանության արժանանալուց հետո 30-րդ օրը:

46. Վերապահումները

Պետությունները կարող են բարձրաձայնել այս կոնվենցիայի այն կետերի մասին, որոնց համաձայն չեն, բայց նրանք չեն կարող չհամաձայնել այս կոնվենցիայի հիմնական մասի հետ:

47. Փոփոխությունները

Ցանկացած պետություն կարող է առաջարկել փոփոխություններ այս կոնվենցիայում: Նրանք կարող են դա անել՝ դիմելով գլխավոր քարտուղարին, որը ներկայացնում է այլ երկրների:

Պետությունները որոշում են, թե առաջարկությունը քննարկելու համար արդյոք հանդիպելու կարիք կա՞ և արդյոք դա պե՞տք է ընդունվի:

48. Կոնվենցիայի չեղյալ հայտարարումը



Պետությունները կարող են չեղյալ հայտարարել այս կոնվենցիան՝ գլխավոր քարտուղարին տեղյակ պահելով: Ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում նրանք դադարում են լինել մասնակից պետություն:

49. Մատչելի տեղեկատվություն

Այս կոնվենցիան հասանելի կլինի հասկանալու համար հեշտ ձևաչափով:

50. Կոնվենցիան այլ լեզուներով



Այս կոնվենցիայի պաշտոնական լեզուներն են արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը, որոնք նույնական են:

Կոնվենցիա
հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին

Հեշտ ընթերցվող տարբերակ

Նկարիչ-ձևավորող՝ Անահիտ Գրիգորյան
Թարգմանիչ՝ Անահիտ Քալանթարյան
Էջադրող՝ Արտակ Համբարձումյան

Տպագրությանն աջակցել են
«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության դանիական կազմակերպությունն
ու Դանիայի միջազգային զարգացման գործակալությունը

© «Հույսի կամուրջի» ՀԿ-ի-2011թ.